

Այն, աւաղ, ցաւագար սըրտիկ,
Մի լար անմըխթար սըրտիկ,
Սիրով համբերէ տար, սըրտիկ:

Ողբեր կ'անես տատ ֆիրիատով, — Խոր խոցուած ես զեղուած նեւ
Ստուածածանայ խիստ կարօտով — Լցուելով լըցուեցար, սըրտիկ, [տով,

Այն, աւաղ, ցաւագար սըրտիկ,
Մի լար անմըխթար սըրտիկ,
Սիրով համբերէ տար, սըրտիկ:

Ատ ինչ սէր էր՝ որ կըրեցիր, — Քեզ կըրակի 'մ մերձեցուցիր.
Ղոնկիանտն ալ հետզ էրեցիր — Երբ որ զու վառուեցար, սըրտիկ:

Այն, աւաղ, ցաւագար սըրտիկ,
Մի լար անմըխթար սըրտիկ,
Սիրով համբերէ տար, սըրտիկ:

Պ. Յ. ԷՄԻՐԱԼԵԱՆ ՅԱՇԻՍՐԱՀԱՀԱՆԴԻՍԻՆ ՊՈՐՏՈՅԻ

ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԻՍ Ի ՊՈՐՏՈՅԻ*. — Պ. Յովհաննէս Էմիրալէեան, հարուստ շինող ուղիներու 'ի Պրուսա, այս շաբաթ Պորտոյի Աշխարհահանդիսին իր գործարանին արգեանց հաւաքում մը շնորհէ:

Պ. Յովհաննէս Էմիրալէեանի ուղեկցք մեծապէս յարգուելով յԱշխարհահանդիսին, քննիչք սահմանեցին իրեն Պատուոյ վայագիրը, զոր Հասարակապետութիւնն ուղղեցաւ պաշտօնական վաճառականութեան Օսմանեան պետութեան, որպէս զի յանձնուի՝ առ օր սահմանեալ է:

Պ. Յովհաննէս Էմիրալէեան երկտասարդ մ'է, որ խորաքնին ուսումն ըրած է յԵւրոպայ

բնաւորւածութեան մասին, և մասնաւորապէս գինւոյ և ուղեկց ըմպելիներու վրայ: Այս իւր ուսմունքները յօգուտ վարեց՝ հիմնելով 'ի Պրուսա մեծ գործարան մը, որ ներկայիս այն պիտի ուղեկցներ կ'ընծայէ, որ կը մրցին օտարաց հետ. այսպէս մի և նոյն ժամանակ՝ մեծ միումն կու տայ երկրին ճարտարութեանց:

Կը ցանկանք որ Պետութիւնն խրախուսէ զՊ. Էմիրալէեան այն ծառայութեանց համար՝ զորս կ'ընծայէ և պիտի ընծայէ իւր գործատունն՝ այնպիսի ճիւղի մը, որ մեր վաճառականութեան նուազ ընդարձակեալ մասերէն մին է:

Մեծ գոհութեամբ արտի կը հրատարակենք յօդուածիկս, և Պորտի գաղտնիքաւ Մարտի 1-ը պահելով՝ մարտ 2-ի թուին քաղելով: Եւ որպիսութեամբ կը ծանուցանենք միանգամայն որ Պ. Յովհ. Էմիրալէեան իւր ուսմանց բովանդակ ընթացքը կատարել է Աննիտայ Մուրատ-Սիւփայեան ուսումնարանին մէջ, ուր՝ յետ գովելի ջանիք ուսմանց ամբողջական ընթացքն աւարտելու 'ի 1879, վարձարանին Տեսչութիւնն ուղարկեց գինին հիւսիսային արեւելեան իտալիոյ Գոնէլլան քաղաքը, ուր հիմնեալ է նոյն տեսչութեան Գինեւանական և Ոգեւա-

նական ամենէն մեծ վարձարաններէն մին. և հոն ևս քաջ հանգիստանալով առանձինն վկայագրի արժանաւոր գտնուեցաւ: Մենք որպիսեցեալ Պ. Էմիրալէեանի իւր անխնայ յաւաքագիտութեան արժանաւոր մըջանակ կը համարենք ստացած այս նոր պատիւն, և կը փափաքենք նոյնպիսի յաւաքագիտութեան գովելի ցոյցեր տեսնել նաեւ ուրիշ ոչ սակաւթիւ աշակերտաց վարձարանիս, որոց վրայ ևս նոյնպիսի յատուկ խնամք ցուցած է Տեսչութիւնն:

